Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Սերգո Աթանեսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը.**
   Անի Ղուկասյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   կլիմայական քաղաքականության վարչության ավագ մասնագետ
   **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Կամբոջայի Թագավորություն՝ 2023 թվականի սեպտեմբերից 25-ից հոկտեմբերի 2-ը
3. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարություն
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի և Արևելյան Եվրոպայի փորձագետների խորհրդատվական խմբի տարածաշրջանային «Կլիմայի փոփոխության ազդեցությունների և դրանց հարմարվողականության գործողությունների ստացված աջակցության կարիքների գնահատում՝ հաշվետվայնության ներկայացման նպատակով» հանդիպմանը:
   Տարածաշրջանային հանդիպման նպատակն է բարելավել զարգացող երկրների մասնագետների կարողությունները՝ կապված կլիմայի փոփոխության ազդեցության և հարմարվողականության հաշվետվողականության ներկայացման, տվյալների հավաքագրման և կառավարման, ազդեցության, ռիսկերի և խոցելիության գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունների ու մոտեցումների հետ:

   **Քննարկված թեմաները (հարցերը).**
   -կլիմայի փոփոխության գլոբալ բնույթը
   -կլիմայի փոփոխության հարմարվողականության հիմնական թիրախները
   -կլիմայի փոփոխության դեմ պայքարի Կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո իրականացվող միջկառավարական գործողությունները
   -Ընդլայնված Թափանցիկության շրջանակներում կլիմայի փոփոխության ազդեցության և հարմարվողականության հաշվետվողականության տարրերը

-կլիմայի փոփոխության ազդեցության, խոցելիության և ռիսկերի վերլուծությունը, գնահատման շրջանակները, պլանավորումը և իրականացումը
-հարմարվողականության, կարիքները, խնդիրները, առաջնահերթությունները, քաղված դասերը, փորձը, համագործակցությունը
-հարմարվողականության ռազմավարությունները, քաղաքականությունները, պլանները, նպատակները, գործողությունները ազգային քաղաքականությունների և ռազմավարությունների մեջ ինտեգրումը
-հարմարվողականության գործողությունների և գործընթացների մոնիթորինգը և գնահատումը
-կլիմայի փոփոխության ազդեցությունների հետ կապված կորուստների և վնասների կանխարգելման, նվազագույնի հասցնելու և դրանց վերացման ուղղված քայլերը, մշակվող մեթոդաբանությունը
-գիտական հենքի վրա հիմնված կլիմայական գործողությունների որոշումների կայացում. վտանգավոր հիդրօդերևութաբանական երևույթների վեր հանումը և գնահատումը
-կլիմայի փոփոխության ազդեցության և հարմարվողականության հետ կապված կարողությունների զարգացման կարիքների և բացերի բացահայտումը
-հարմարվողականության համար ստացված աջակցության վերաբերյալ հաշվետվողականության մեթոդաբանությունը
Թափանցիկության ընդլայնված շրջանակի իրականացման համար անհրաժեշտ և ստացված աջակցության մասին հաշվետվայնության ընդհանուր աղյուսակային ձևաչափերի, գործիքների ներկայացում :

**Հանդիպումները, ելույթները.**

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, Բրազիլիայի, Հնդկաստանի, Շրի Լանկայի, Ինդոնեզիայի, Մալազիայի, Մոլդովայի, Մոնղոլիայի, Սիրիայի, Իրաքի և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի այլ երկրների ոլորտային մասնագետներ, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի քարտուղարության և Արևելյան Եվրոպայի փորձագետների խորհրդատվական խմբի փորձագետներ:
Երկրները կիսվեցին իրենց փորձով, ներկայացնելով խնդիրները, խոչընդոտները, քաղած դասերը, հարմարվողականության գործողություններ, միջոցառումներ, քաղաքականության մշակելիս: Յուրաքանչյուր ներկայացումից (պրեզենտացիայից) հետո մասնակիցներին տրվում էին թեմատիկ խմբային աշխատանքներ, ինչպես նաև ծավալվում էին մասնագիտական քննարկումներ:
Հանդիպմանը հանդես եմ եկել ներկայացումով (պրեզենտացիայով). իմ ելույթում ներկայացրել եմ կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների, ինչպես նաև «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցումը» ծրագրերի ներքո իրականացվող և իրականացվելիք միջոցառումները:

**Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման արդյունքում եղավ փորձի փոխանակում հարմարվողականության գործողությունների, քաղաքականության և դրանց ազդեցության հավաքագրման մեթոդաբանության, չափողականության, հաշվետվողականության և հավաստագրման (ՉՀՀ) համակարգերի ինստիտուցիոնալ շրջանակի մշակման, ստեղծման ընթացքում հանդիպած խնդիրների և հիմնական քաղած դասերի վերաբեյալ:

**Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**
Փարիզյան համաձայնագրի 13-րդ հոդվածով թափանցիկության ընդլայնված շրջանակի (ԹԸՇ) ձևաչափերում, ընթացակարգերում և ուղեցույցներում (ՁԸՈՒ-եր) ներկայացված հաշվետվողականության պահանջները, ինչպես նաև ընդհանուր աղյուսակային ձևաչափը ներկայացվեց:
Առաջարկվեց մանրամասն ուսումնասիրել և գնահատել վերոնշյալ աղյուսակի արդյունավետությունը. վերջինս կիրառվելու է Կողմ երկրների առաջին (BTR1) երկամյա թափանցիկության զեկույցները կազմելիս, ինչը կողմերը պարտավոր են ներկայացնել մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը:
Կարևորվեց աջակցության տրամադրումը և թափանցիկության հետ կապված կարողությունների շարունակական զարգացումը զարգացող երկրների համար՝ Փարիզյան համաձայնագրի 13-րդ հոդվածի իրականացման նպատակով: Հանդիպման ավարտին մասնակիցներին տրվեցին վկայականներ:

*Գործուղվող՝ Անի Ղուկասյան*

*09.10.2023*